

NOVEMBER 15, 2015 - ՆՈՅԵՄԲԵՐ 15, 2015

TENTH SUNDAY OF THE EXALTATION OF THE HOLY CROSS  
ՏԱՍՆԵՐՈՂԴ ԿԻՐԱԿԻ ԽԱԶՎԵՐԱՅԻ

PAREGENTAN OF THE FAST OF ADVENT  
ԲԱՐԵԿԵԼՂԱՆ ՅԻՄՆԱԿԻ ՊԱՀՈՑ

Synaxis Readings - Phil. 1:1-11, Luke 9:44-50.

Ճաշու Ընթերցուածներ - Փիլ 1:1-11, Լուկ 9:44-50



ԲԱՐԵԿԵԼՂԱՆ ՅԻՄՆԱԿԻ

Կեանքիդ իւրաքանչիւր օրն այնպէս ապրէ, որ կարծես թէ ապրածդ վերջին օրն է, ու Աստուծոյ առջեւ մեղք չես գործեր: (Արքա Եսայի)

Live each day as if it was the last day of your life and you will not sin against God.

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Եւս առաւել յիշեա Տէր զհոգին.....

- |                      |                      |
|----------------------|----------------------|
| Յարութիւն Գայայեան   | Haroutiun Kayayan    |
| Իշխան Մարկոսեան      | Ishkhan Margossian   |
| Վառվառ Դաւիթեան      | Varvar Davidian      |
| Տալիթա Քէշիշողլու    | Daleta Keshishoglu   |
| Գեղարփի Ասատուրեան   | Kegharpi Asadourian  |
| Ռուբեն Հարությունյան | Ruben Harutyunyan    |
| Աննիկ Մանճոսնեան     | Annik Manjsonian     |
| Նազարէթ Մանճոսնեան   | Nazaret Manjsonian   |
| Մարգիս Մանճոսնեան    | Sarkis Manjsonian    |
| Աւետիս Արմաղանեան    | Avedis Armaghanian   |
| Պերճ Տէր Պօղոսեան    | Berj Der Boghossian  |
| Ալիս Տէր Պօղոսեան    | Alice Der Boghossian |

Յաւարտ Ս. Պատարագի սուրճի եւ անուշեղենի հիւրասիրութիւն՝ նորացեալ Յարութիւն Գայայեանի եւ Իշխան Մարկոսեանի յիշատակին՝ իրենց հարազատներու կողմէ:

Following the Divine Liturgy coffee & cookies will be served for the late **Haroutiun Kayayan and Ishkhan Markossian** by their loved ones.

ԱՄԷՆՕՐԵԱՅ ԱՂՕԹՔ

Տէ՛ր, ըրէ այնպէս՝ որ սիրտս Քու սիրովդ եւ քաղցրութեամբդ լեցուի, եւ ես ալ Քու բարութեանդ ցոլացումը ըլլամ շրջապատիս մէջ: Խեղճն ու տկարը ոտնակոխ չընեմ, ցաւին ու տագնապին անտարբեր չի մնամ, այլ՝ Քու քաղցր ցօղ ըլլամ, եւ անժպիտ մարդոց ժպիտ մը բերեմ, անուրախ մարդոց սիրտը ուրախացնեմ, յուսահատ մարդոց յաւիտենական կեանքի յոյսը տամ, անսէր մարդոց սէր բաշխեմ, սառնացեալ սիրտերը սիրովդ ջերմացնեմ՝ Քու սուրբ անունովդ: Ամէն:



### DAILY PRAYER



Lord, please fill my heart with your love and sweetness, so I can become the reflection of your goodness to my surroundings. Work in me Lord, so I will not trumple the weak and the helpless; so I will not be ignorant to the pain and trouble, but rather will be the expression of Your love and put a smile on people's faces; so I will bring happiness to unhappy and joy to the sad; so I can give the light of eternal life to the hopeless and share Your love with the loveless, so I may bring the warmth of Your love to the cold hearts and do it all in Your Holy name. Amen.

### ՄԱՇՏՈՑ

«Մաշտոց»ը Եկեղեցական խորհրդակատարութիւններու եւ հոգեւոր արարողութիւններու կատարման ուղեցոյցն է: Հայ Եկեղեցոյ բոլոր ծէսերն ու արարողութիւնները կը կատարուին «Մաշտոց»ի համաձայն: Կան երեք «Մաշտոց»ներ՝ Փոքր, Մայր եւ Հայր: Առաջինի մէջ նշուած են քահանայի կողմէ կատարուող բոլոր արարողութիւնները, երկրորդի մէջ՝ եպիսկոպոսական կանոնները, եւ երրորդի մէջ՝ Կաթողիկոսական կանոնները:




### ՅԻՇԱՏԱԿ Ս. ԱՆԴՐԵԱՍ և Ս. ՓԻՒՊՊՈՍ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ

Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Անդրեաս և Ս. Փիլիպպոս առաքելներու յիշատակը կը տօնի Ս. Խաչի 9-րդ Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը:



**Անդրիաս Առաքելը** Ս. Պետրոսի կրտսեր եղբայրն է, նախապէս աշակերտած է Յովհաննէս Մկրտիչին: Յիսուսին առաջին ծանօթ հետեւողը եղած ըլլալուն համար կոչուած է նախակոչ: Ըստ աւանդութեան, եղած է քարոզիչ սկիւտացիներուն եւ հիւսիսային Յունաստանի բնակիչներու: Նահատակուած է Բաթրաս քաղաքը: Սկովտիոյ եկեղեցին եւ յոյներու տիեզերական պատրիարքութիւնը զայն կը նկատեն իրենց պաշտպան սուրբը:

**Փիլիպպոս Առաքել**, առաջին կանչուած առաքելներէն մէկն է: Հաւանաբար ինքն ալ աշակերտած է Յովհաննէս Մկրտիչին եւ ապա հետեւած Յիսուսին: Փիլիպպոս շատ անգամներ յիշուած է Յովհաննէսի Աւետարանին մէջ, առհասարակ Անդրիասի հետ միասին: Աւանդութիւնը կ'ըսէ, որ քարոզած է Փոքր Ասիա եւ նահատակուած իսաչելութեամբ Հերապոլիս քաղաքը:



### THE HOLY APOSTOLS ANDREW AND PHILIP

On Saturday November 15 the Armenian church is celebrating two Holy Apostols of our Lord Jesus Christ, Andrew and Philip.



**Apostle Andrew:** Before becoming Christ's disciple Apostle Andrew has been the disciple of St. John the Baptist. He accepted John the Baptist's testimony about Jesus; told Peter about Jesus. He was the brother of the Apostle Peter and was a fisherman. After the Ascension of the Lord and the Descend of the Holy Spirit Apostle Andrew has preached in Northern Greece and in Scythe. He and Phillip told Jesus that Greeks wanted to see him.

**Apostle Philip:** Apostle Phillip was from the town Bethsaida and was a fisherman. Perhaps he also has been the disciple of St. John the Baptist. He told Bartholomew (Nathanael) about Jesus. He had a questioning attitude and wondered how Jesus could feed the 5,000. He has preached in Asia Minor. Apostle Philip has been martyred and crucified in the town Heliopolis.





### ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՅԻՍՆԱԿԻ ՊԱՀՈՑ

Ըստ Հայ Առաքելական Եկեղեցւոյ օրացոյցի , այս տարի «Յիսնակի» պահոց շրջանը կը սկսի Կիրակի, Նոյեմբեր 15- ին, որ անգլերէնով կ'անուանուի Advent: Յիսնակը, 50 օրերու միջոց մըն է, որուն ընթացքին կը պատրաստուինք տօնելու Յիսուսի Ծնունդն ու

Աստուածայայտնութիւնը, որ տեղի կ'ունենայ Յունուար 6-ին: Յունուար 6-էն 50 օրեր ետեւ հաշուելով կը հասնինք Նոյեմբեր 18-ին, հետեւաբար այդ թուականին ամենէն մօտ Կիրակիին Յիսնակի Բարեկենդանն է: Եօթը շաբթուայ յիսնակի շրջանի ընթացքին իւրաքանչիւր շաբթուայ Շաբաթ օրը կ'իրականութիւն շաբականներու երգեցողութեամբ եւ աղօթքով մանիշակագոյն նոր մոմ մը կը վառուի:

Նախկինում Յիսնակի ամբողջ տեւողութեան ընթացքին պահք կը պահուէր, Ս. Յարութեան նախորդող մեծ պահքին պէս: Սակայն ներկայիս սովորական Չորեքշաբթիի եւ Ուրբաթի պահքերէն զատ երեք շաբաթներու վերածուէր է Յիսնակի Պահքը: Առաջին շաբաթը Յիսնակի Պահք, Դեկտեմբերին՝ Ս. Յակոբի պահք, իսկ Յունուարին՝ Ս. Ծննդեան պահք:

### EVE OF THE FAST OF ADVENT

Today is the Eve (*Paregtan*) of the Fast of Advent (*Hisnag*). This is a week-long fast (Monday to Friday) leading up to the first Sunday of Advent, which is next Sunday, November 23. Advent is the period that guides us up to the birth and baptism of Christ. It begins fifty days before January 6. Unlike the Western tradition of 25 days from December 1 to Western Christmas Day, our Advent extends for 50 days (the name Hisnag comes from the word “fifty” ) through to Armenian Christmas, January 6, which celebrates both the birth and baptism of our Lord. Traditionally, the entire fifty-day period of Advent has been a period of fasting. Now, there are three week-long fasts during Advent (along with the regular fasting days of Wednesday and Friday). The three week-long fasts are known as: The Fast of Advent (*Hisnagats Bahk*); The Fast of St. James (*Sourp Hagopi Bahk*); and the Fast of the Nativity (*Dzenentots Bahk*).



### CALENDAR OF EVENTS

**November 27- Ladies Christmas Party, 7:30 pm at Lara's Restaurant in support of Sick Kids Foundation\***

**December 6 - 87th Anniversary of The Establishment Of The Church Parish.** Divine Liturgy & Special Requiem service followed by the Anniversary Banquet in Magaros Artinian Hall\*

*\*For thickets and reservations please church office at 416-431-3001.*



**Ս. Սեղանի ծաղիկներու եւ թերթիկի հովանաւոր՝**  
*Տէր եւ Տիկին Սատաթ Բ. եւ Թամար Սամուրեան*

**The Altar Flowers and the Sunday Bulletin are sponsored by**  
*Mr. & Mrs. Madat and Tamar Mamourian*

**Reminder:** HTAC Parish Council would like to thank all our members that have already paid their membership dues for the year 2015. This is a reminder to the rest of our existing members, that HTAC 2015 Membership fee is due (\$60.00 for adults and \$30.00 for students 18years and older). It will be really appreciated if you could pay your annual membership fee at your earliest convenience.



**New Members:** The parishioners, who are interested in becoming a dues paying member of Holy Trinity Armenian Church, are encouraged to approach the Parish Council members in the church lobby to obtain the membership application and for additional information or contact the church office during the week.

DATE	NOVEMBER FEASTS 2015
21	<b>Presentation of the Holy Mother of God:</b>
22	<b>First Sunday of Advent</b>
26	St. Clement
28	The Holy Apostles and our First Illuminators Thaddeus and Bartholomew
29	<b>Second Sunday of Advent</b>

**THE PSALM OF DISMISSAL -PSALM 34**

Օրհնեցից ըզՏէր յամենայն ժամ,  
յամենայն ժամ,օրհնութիւն նորա ի բերան իմ:

Orhnetseets ezDer hamenayn zham,  
hamenyn zham orhnootyoon nora ee peran eem.

I will extol the Lord at all times.  
His praise shall be at all times on my lips.



**WHEN APPROACHING THE HOLY GOSPEL AT THE END OF THE  
DIVINE LITURGY**

**ՅԱԻԱՐՏ Ա. ՊԱՏԱՐԱԳԻ Ա. ԳԻՐՔԸ ՀԱՍԲՈՒՐԱԾ ԱՏԵՆ**

**YOU SAY:**Heeshestzeh Der zamenaym Badarakus koh.  
Յիշեցէ Տէր զամենայն Պատարագս քո:  
May the Lord remember all your offerings.



**THE PRIEST ANSWERS:** Datseh kez Der usd srdee koom yev  
zamenayn khorhoortus koh ee parees na gadarsestseh.  
Տացէ քեզ Տէր ըստ սրտի քում եւ զամենայն խորհուրդս քո  
ի բարիս նա կատարեցէ:  
May the Lord grant you according to your own heart, and fulfill all your  
counsel in goodness.(Psalm 20:4)

**THE KISS OF PEACE**



**The GIVER says:** Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ  
Kreesdos ee mech mer haydnetsav  
Christ is revealed amongst us.

**The RECEIVER says:** Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի  
Orhnyal eh haydnootyoonun Kreesdosee  
Blessed is the revelation of Christ.

**ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱԻԱՏՈՅ**

Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն Ամենակալ,  
յԱրարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւոյթից:  
Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդին Աստուծոյ,  
ծնեալն յԱստուծոյ Հօրէ, Միածին՝ այսինքն յետեան  
Հօր: Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած  
ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած:  
Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև  
յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթ:



Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի  
յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի  
Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ զմարմին,  
զհոգի եւ զմիտ եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ  
կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ,  
ելեալ ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է  
նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս,  
որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն, որ  
խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս: Որ էջն ի  
Հորդանան, քարոզեաց յառաքեալան, եւ բնակեցաւ ի սուրբսն:  
Հաւատամք եւ ի մի միայն, ընդհանրական եւ առաքելական սուրբ  
եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի  
թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից  
հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն  
յաւիտենականս: